

ցաւ 1287 թուին(*) եւ մասնակից եղաւ Ստեփանոս Օրբէլեանի գլխաւորութեամբ ընդդէմ Անաւարդեցու գումարուած ժողովին(**)։ Մկրտիչ արեղան յիշելով իւր ուսուցիչ Գրիգոր Բճնեցու (սա եւս ժողովի անդամներից եւ ժամանակի գրասէր վարդապետներից մէկն էր) մահը 1298 թուին, խնդրում է յիշել «այլ եւ զքվերորդին զար. Յովէս զարհեպիսկոպոսն Բրջնոյ (s!) եւ զվերատեսուէն Այրարատեան նահանգին, զսնեալն սրբութբ. եւ զվարժեալն ա. առաքինութբ., որ է այր հեզ եւ երկայնամիտ եւ զուարթ զիմաւք . . .» եւն. (***)։ Ստեփանոս Օրբէլեան իւր Հակաճառութեան ութերորդ եւ իններորդ ձեռնարկները գրել է «ի խնդրոյ ան. Յովանիսի Այրարատեան նահանգին եպսկի.» կամ «ի խնդրոյ ան. Յովանիսի Բրջնոյ եպիսկի.» (****)։ Մկրտիչ Թեղենեցին, երբ 1302 թուին գրում էր էջմ. № 1844 ՆԺ. ձեռագիրը նշեցու համար, կենդանի էր տէր Յուհաննէս, «որոյ կցորդեալ կամացն (նշեցույ) բարեւեր յաւժարութբ. եւ ձեռնտու աւժանդակութբ., հոգւոյն շնորհաւք ծաղկեալ սրբազան եւ ամապատուեալ արհեպոսն, տր. Յովաննէս, որ ունէր զվերատեսութի. այցելականն զիտման քահանայականն դասու կատարողապետութե. Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բրջնի, որ էր ա. առաքինութբ. զարգարեալ, զորս խնամքն այ. պահեցէ զնա խաղաղական կենսք, շնորհելով եկեղեցոյ սրբոյ ընդ երկայն աւուրս»։

Այ դասի աւանդատան շինող Յովհաննէս «ծայր»ի արձանագրութեան (Ա. 46ա) տակ է մի կիսեղծ արձանագրութիւն « . . . (ներսէ ?) Զարաբերդո եպիսկոպոս»ի, որին տարին մի ժամ են նշանակում ճրագաւուցին. իբրեւ շարունակութիւն վերջին տողի կըցուած է եւ ոմն «Սարգիս տանուտորջ» արձանագրութիւնը, որին վեց ժամ է խոստացուած բոլոր եկեղեցիներում (Յաւել. Ա. 61ա 61բ)։ Զարաբերդի մի եպիսկոպոս Ներսէս անունով արձանագրութիւն ունի Հաւուց Թառում. կարծում ենք, որ սորա անունն էլ Ներսէս պիտի լինի, որի անունն վերջին տառն էլ սնացած է անեղծ։ Ներսէս Զարաբերդի եպիսկոպոսը Սարգիս եպիսկոպոս Դոփեանի քրոջ որդին է. վերջինս իբրեւ եպիսկոպոս յիշուած է 1311, 1312 թուերին և վախճանուած է 1336 թուին(*****)։ Մօտաւորապէս այս ժամանակ էլ պէտք է նշանակել Ներսէս Զարաբերդեցու դեգերումը արարատեան երկրում՝ Հաւուց Թառում և կեչառիսում։

(*) Ձեռ. էջմ. № 1432/1422, փրկաւէմեան, Նշխարք Հայոց Պատմ. (անտիպ) Թ. 37 յիշատակարանը։

(**) Օրբէլեան, Ղուկ. հրատ. 461։

(***) Ձեռ. էջմ. № 1395/1405, Յաւել. Բ. 65։

(****) Մեր Ձեռագիրը, այժմ էջմիածնի մատենադարանում։

(*****) Բարխուդարեան, Արցախ, 205, 206, 290։ Մանրամասնութիւններ մեր Հաւուց Թառի Ամենափրկչին նուիրուած աշխատութեան մէջ։

Մի քանի անթուական արձանագրութիւնների ժամանակը դժուար է որոշել, չունենալով որ եւ է ցուցում. այդպիսիներն են.

ա) Գրիգորի որդի Խոցադեղի արձանագրութիւնը, որ գտնուած է ձախ դասի սիւնի կամարի վերայ՝ Ներսէս վարդապետի անունն յիշատակութեամբ Սարգսի արձանագրութեան տակ.

կամաւն այ. ես Գրիգոր որդի Խոցայդեղին եւ ամուսին իմ Գոհար | տուաք զմեր հոգո արդինս (s!) ի սբ. Գրիգորս. միաբանքս տվին :Բ: աւր ժամ ի տաւնի քաւշիցն :Ա: ինձ եւ :Ա: Գոհարին, ով որ խափանէ դատի ի տէ.

Այս արձանագրութիւնն ունի իւր կրկնակը հիւսիսային պատի յետին դասի կիսասեան կամարի վերայ, կարմրագեղով և փորած.

եւ Գրիգոր որդի Խոցադեղին եւ ամուսին իմ Գոհար տուաք | զմեր հոգո արդիւնս ի սբ. Գրիգոր եւ միաբանքս էտուն :Բ: | աւր պատաւրազ . . . (մնացած մի տողը եղծուած)։

բ) Նոյն կիսասեան խոյակի բարձի վերայ.

եւ Մարկոս քահանա տվի զիմ հոգո արդիւնս ի սբ. Գրիգորս միաբանքս ետուն ի տաւին :Գ: ժամ Անդրէի տաւնին, էթէ ոք խափանէ իմ մեղացն տէր է։

գ) Յետին դասի աջակողմը սիւնի կամարի վերայ, գէպի ժամատան կեդրոնը.

եւ Յովանէս եւ ամուսն (s!) իմ տուաք զմեր հոգոյ արդիւնքս | ի սբ. Գրիգորս. միաբանքս ետուն ի տաւին :Բ: | աւր պատաւրազ Յովաննու տաւնին ինձ եւ ամուսին (s!) իմ. ով խափանէ մեր մեղացն | տէր է այ. առաջի։

դ) Աջակողմեան սիւնի կամարին վերայ, գէպի կեդրոնը. առաջին երեք տողերը ծեփի վերայ, թափած է.

. . . տիքս եւ ամուսին իմ . . . | անեմ տիկին միաբանեցաք | սբ. ուխտիս կեչառու/աց եւ տվաք զմեր հոգոյ արդիւնքն ի սբ. Գրիգոր | :Բ: ժամ սբ. Գրիգորի տաւնին ով ոք | խափանէ դատի։

ե) Ժամատան հարաւային պատին՝ ներսը, Պապաբի արձանագրութիւնից բարձր.

եւ Պողոս տուի զիմ հոգոյ արդիւնս ի սբ. Գորս (Գրիգորս) միաբանք | հաստատեցին :Ա: աւր պատաւրազ Նոր Կիւրակերին, որ խափան/են դատի (s!) ի տունէ։

զ) Կոնստանդին տաճարի արեւելեան պատին փորագրուած են երկու խաչ, կողքերին հետեւալ արձանագրութիւնները.

1. Սբ. Խաչս (ս չ-ի բոլորակի մէջ) բարեխաւս Ուստիան | Փիրպապին եւ Ներսեսին.